

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/4

8 նոյեմբերի 2016թ.

Քննարկվեց «Տեխնոպլաստ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ:

«Տեխնոպլաստ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Տեխնոպլաստ» ՍՊԸ կողմից Ռուսաստանի Դաշնությունից ս/թ հունիս ամսին կատարվել է երկու ներմուծում՝ 03.06.16թ.-ին և 16.06.16թ.-ին: Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացվել են ներմուծման հարկային հայտարարագրերը 13.07.16թ.-ին: 03.06.16թ.-ի հարկային հայտարարագիրը ճիշտ է գրանցվել, իսկ երկրորդ հայտարարագրում սխալմամբ ապրանքների ներմուծման ամսաթիվը նշվել է 17.06.16թ., բայց պետք է լիներ 16.06.16թ.: Ներմուծման ԱԱՀ-ի գումարները փոխանցվել են ժամանակին՝ 20.07.16թ.-ին:

Կատարված սխալն ընկերության կողմից հայտնաբերվել է, սակայն այդ ժամանակ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգում ԵՏՄ գործարքների դարան բաժինը թույլ չէր տալիս ուղղում կատարել:

Ս/թ սեպտեմբերի 9-ին Կենտրոն ՀՏ է ներկայացվել նամակ՝ խնդրելով անվավեր համարել 13.07.16թ.-ին գրված սխալ օրով (17.06.16թ.) հայտարարագիրը, որի փոխարեն գրվել է 08.09.16թ.-ին նոր հայտարարագիր, որտեղ նշված է ճիշտ ներմուծման օրը (16.06.16թ.):

Արդյունքում կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ը և գրանցվել է ապառք 442.564 դրամ և տույժ 13.276 դրամ՝ 10.10.16թ.-ի դրությամբ:

Ընկերության նկատմամբ սխալմամբ է կիրառվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, քանի որ այն կիրառվում է հայտարարագիրը ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու դեպքում, իսկ տվյալ դեպքում այն ներկայացվել է ժամանակին: Սխալը կատարվել է հայտարարագրում՝ ներմուծման ամսաթվի մեկ օրվա տարբերությամբ, այն է՝ հունիսի 16-ի փոխարեն գրվել է 17, իսկ ՀՀ ԿԲ արտարժույթային փոխարժեքը վերցվել է 16-ինը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է նկատի առնել, որ հարկային հայտարարագիրը գրվել է, ինչպես նաև համապատասխան ԱԱՀ-ն վճարվել է ժամանակին, ընկերության կողմից չեն անտեսվել համապատասխան պարտականությունները, այլ կատարվել է զուտ մեխանիկական սխալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ 16.06.16թ.-ին «Տեխնոպլաստ» ՍՊԸ-ի կողմից Ռուսաստանի Դաշնությունից ներմուծվել են ապրանքներ, որոնց համար 14.07.16թ.-ին սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացվել է «Ներմուծման հարկային հայտարարագիր»: Սակայն նշված հայտարարագրում «Ապրանքների ներմուծման

ամսաթիվը» տողում 16.06.16թ.-ի փոխարեն սխալմամբ նշվել է 17.06.16թ.-ը: Ընդ որում, ներմուծված ապրանքների համար նախատեսված ԱԱՀ-ի գումարը սիմանված ժամկետում վճարվել է:

Կատարված սխալն ընկերության կողմից հայտնաբերվել է ինքնուրույն և 09.09.2016թ.-ին Կենտրոն ՀՏ է ներկայացվել գրություն, որով խնդրվել է անվավեր ճանաչել 14.07.16թ.-ին ներկայացված «Ներմուծման հարկային հայտարարագիր»-ը: Միևնույն ժամանակ, վերոգրյալ ներմուծման վերաբերյալ ներկայացվել է նոր «Ներմուծման հարկային հայտարարագիր», որում «Ապրանքների ներմուծման ամսաթիվը» տողը լրացվել է ճիշտ՝ նշելով 16.06.16թ.: Արդյունքում համարելով, որ 16.06.16թ.-ին ներմուծված ապրանքների համար «Ներմուծման հարկային հայտարարագիր»-ը ներկայացվել է 09.09.2016թ.-ին, Կենտրոնի ՀՏ կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ «Ներմուծման հարկային հայտարարագիր»-ում ապրանքների ներմուծման ամսաթիվը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ «Ներմուծման հարկային հայտարարագիր»-ում տեղ գտած մեխանիկական սխալը, որը հետագայում ուղղվել է նույն գործարքի վերաբերյալ նոր «Ներմուծման հարկային հայտարարագիր» ներկայացնելու միջոցով, չի կարող հիմք հանդիսանալ ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների հաշվարկման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Տեխնոպլաստ» ՍՊԸ անձնական հաշվի քարտից նվազեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի հիման վրա հաշվարկված պատասխանատվության միջոցը՝ գումարով 429.371 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Մ. ԻՐՈՒՄՅԱՆ

